ԱՃԻ ՀՈՐՄՈՆ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

WIGMORE

ԵՐԵԽԱՅԻ ԱՃԸ

Երեխայի աճը առողջության կարևորագույն ցուցանիշներից մեկն է:

Երեխայի աճը կախված է բազմաթիվ գործոններից, ինչպես օր.՝ սնուցումը, ժառանգական գործոնը, բավարար քունը, ֆիզիկական ակտիվությունը, երեխայի հոգեբանական վիճակը և երեխայի ընդհանուր առողջական վիճակը (քրոնիկ հիվանդությունների առկայությունը կամ բացակայությունը): Աճի գործում, իհարկե, շատ մեծ դեր են խաղում նաև հորմոնները:

Երեխայի կյանքի ընթացքում աճի առավելագույն արագությունը դիտվում է կյանքի առաջին տարվա ընթացքում և կազմում է տարեկան մոտ 25սմ:

Կյանքի երկրորդ տարվա ընթացքում երեխայի հասակը ավելանում է մոտ 12,5սմ-ով:

Այնուհետև աճի արագությունը դանդաղում է՝ կազմելով տարեկան մոտ 4-6սմ:

Աճի զգալի արագացում դիտվում է սեռական հասունացման ընթացքում, երբ աղջիկների մոտ հասակը 1 տարվա ընթացքում ավելանում է միջինում 8-10սմ-ով, իսկ տղաների մոտ՝ միջինում 10-12սմ-ով: Սեռական հասունացմամբ պայմանավորված ակտիվ աճի այս շրջանը շարունակվում է մոտ 2 տարի, որից հետո աճը կտրուկ դանդաղում է և դեռահասը հասնում է իր վերջնական հասակին:



Երեխայի վերջնական հասակը կախված է ծնողների հասակից: Ըստ ծնողների հասակի՝ կարելի է նաև որոշել երեխայի կանխատեսվող հասակը: Երեխայի բնականոն աճի դեպքում նրա վերջնական հասակը պետք է գտնվի կանխատեսվող հասակից +/- 8,5սմ-ի սահմաններում:

Տղաների կանխատեսվող հասակ = (հայրական հասակ+մայրական հասակ) / 2 + 6,5 սմ

Աղջիկների կանխատեսվող հասակ= (հայրական հասակ+մայրական հասակ) / 2 - 6,5 սմ



Երեխայի աճի հապաղումը կարող է պայմանավորված լինել մի շարք էնդոկրին խնդիրներով, ինչպես օր.՝ աճի հորմոնի անբավարարություն, վահանաձև գեղձի թերֆունկցիա, սեռական հորմոնների անբավարարություն և այլն:

Երեխայի աճը հնարավոր է խթանել տարբեր մեթոդներով՝ կախված հապաղման պատճառներից:

Երեխայի հասակը և քաշը նշվում է երեխայի զարգացման քարտի հատուկ աղյուսակում՝ յուրաքանչյուր առողջ այցի ժամանակ: Տվյալների խնամքով գրանցման դեպքում աճի շեղումը հնարավոր է վաղ հայտնաբերել և ավելի արդյունավետ միջամտել:

Հարգելի՛ ծնողներ, հետևողականորեն իրականացրեք երեխայի տարեկան կանխարգելիչ այցերը, որպեսզի մանկաբույժը կամ ընտանեկան բժիշկը գրանցի և գնահատի երեխայի աճի չափանիշները:

ՈՒԻԳՄՈՐ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...



WIGMORE